ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2019թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-258-14.08.2019-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1274-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-258-14.08.2019-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացվող օրենքի նախագծով առաջարկվում է կանանց՝ յուրաքանչյուր ծննդաբերությունից հետո պետական պատվերի շրջանակներում պարտադիր տրամադրել հավաստագրով սահմանված անվճար բժշկական հետազոտության միանվագ նպաստ, որը ներառում է մայրական կաթի որակի, Ca և D վիտամինների, արյան հետազոտությունները և կրծքի սոնոգրաֆիա կամ մամոգրաֆիա: Հավաստագիրը տրամադրվում է մինչև յուրաքանչյուր ծննդաբերության հետծննդյան շրջանի ավարտը, որն ուժի մեջ է մտնում հետծննդյան շրջանի ավարտի օրվան հաջորդող օրը և գործում է մեկ տարի ժամկետով: Ըստ հիմնավորման՝ օրենքի նախագծի մշակման հիմք են հանդիսացել մայրերի հետ կատարված քննարկումները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է գործող օրենքը թողնել անփոփոխ՝ նկատի ունենալով ստորև ներկայացված հանգամանքները՝

1) ներկայացվող օրենքի նախագծով առաջարկվող ծննդկանի առողջության պահպանման միանվագ նպաստի բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ ըստ էության առաջարկվում է մշակել և կյանքի կոչել առողջապահական ծրագիր՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացնելով օրենքի նախագծով առաջարկվող հետազոտություններ: Հարկ է նշել, որ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ պետական նպաստը պետական բյուջեի միջոցներից պարբերաբար կամ միանվագ տրամադրվող դրամական օգնություն է: Ըստ այդմ առաջարկվող ծրագրի հետ կապված հարաբերությունները չեն կարող հանդիսանալ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կարգավորման առարկա.

2) մայրերի հետ տեղի ունեցած քննարկումների արդյունքները չեն բխում ապացուցողական բժշկության թեզերից: Բացի դրանից, հստակ չէ, թե հատկապես ինչ հիմքերով են ընտրվել նշված լաբորատոր-գործիքային հետազոտությունները: Ապացուցողական բժշկագիտությամբ հիմնավորված և հստակ արդյունքային ցուցանիշների առկայության դեպքում պետք է սահմանվի ծայրահեղ անհրաժեշտ բժշկական հետազոտությունների ցանկ՝ հաշվի առնելով հետծննդյան շրջանում կանանց առավել հաճախ հանդիպող հիվանդությունների և ախտաբանական վիճակների վերաբերյալ վերջին առնվազն երեք տարվա տեղեկատվությունը, ինչը թույլ կտա համապատասխան հաշվարկների հիման վրա տալ ֆինանսական գնահատական.

3) օրենքի նախագծի ընդունմամբ ակնկալվող ծնելիության մակարդակի բարձրացման կապակցությամբ հայտնում ենք, որ ծնելիությունը դեմոգրաֆիկ ցուցանիշ է՝ կախված սոցիալական, տնտեսական ցուցանիշներից, բնակչության տարիքասեռային կազմից, և առողջապահական բաղադրիչը որոշիչ չէ.

4) օրենքի նախագծի ընդունումը ենթադրում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի զգալի ավելացում, որի չափը որոշել հնարավոր չէ՝ համապատասխան տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ԲԱԼԱՇՈՎԻՉ

9 սեպտեմբերի 2019 թվականի N 1274 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Լևոն Հակոբյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-258-14.08.2019-ԱՍ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 9
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-258-14.08.2019-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր՝ 6.2-րդ կետ.

«6.2) ծննդկանի առողջության պահպանման համար՝ հավաստագրով սահմանված անվճար բժշկական հետազոտության միանվագ նպաստը»:

Հոդված2. Օրենքի 5.1-րդ գլխում լրացնել նոր՝ 23.3-րդ հոդված.

«Հոդված 23.3 Ծննդկանի առողջության պահպանման համար միանվագ նպաստի իրավունքը

1. Վարձու աշխատող, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված եւ չաշխատող կանանց՝ յուրաքանչյուր ծննդաբերությունից հետո պետական պատվերի շրջանակներում պարտադիր տրամադրվում է հավաստագրով սահմանված անվճար բժշկական հետազոտության միանվագ նպաստ, որն իր մեջ ներառում է մայրական կաթի որակի, Ca եւ D վիտամինների, արյան հետազոտությունները եւ կրծքի սոնոգրաֆիա կամ մամոգրաֆիա:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հավաստագիրը տրամադրվում է մինչեւ յուրաքանչյուր ծննդաբերության հետծննդյան շրջանի ավարտը: Հավաստագիրն ուժի մեջ է մտնում հետծննդյան շրջանի ավարտի օրվան հաջորդող օրը եւ գործում է մեկ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հավաստագրի տրամադրման կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

Հոդված3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

Առկա խնդիրները եւ իրավիճակը

Այսօր մայրության առողջության հետ կապված ցանկացած հարց հնարավորինս գտնվում է պետության հոգածության ներքո: Վերլուծությունները ցույց են տվել, որ որոշակի առողջական խնդիրներ կանաց մոտ ի հայտ են գալիս ծննդաբերությունից հետո եւ պրակտիկայում տարբեր՝ սոցիալական, ֆինանսական եւ այլ պատճառներով մայրացած կանայք ծննդաբերությունից հետո չեն անցնում մինիմալ՝ ծայրահեղ անհրաժեշտ բժշկական հետազոտություններ: Այդ հետազոտությունների ցանկը սահմանել ենք առաջարկվող օրենքի նախագծով: Նման պարագայում՝ առկա առողջական խնդիրները ժամանակին չհայտնաբերելու դեպքում բարդանում են եւ իրենց բացասական հետեւանքներով դժվարանում է կանխարգելումը կամ բուժումը (որոշ դեպքերում՝ դառնում է անհնար): Պետության կողմից մայրության առողջության պահպանման նպատակով՝ նման միջոցառման իրականացումը հնարավորություն կտա նախորոք հայտնաբերել եւ հնարավորինս կանխարգելել ծննդաբերությունից հետո առաջացող մի շարք առողջական խնդիրները:

Օրինագծի մշակման հիմք են հանդիսացել մայրերի հետ հիմնականում այդ խնդիրների շուրջ կատարված քննարկումները: Քննարկումներին բոլոր մասնակից մայրերը միակարծիք են եղել այն հարցում, որ ծննդաբերությունից հետո կանանց մեծամասնությունը կօգտվի նման բժշկական հետազոտության իրավունքից: Արդյունքում ժամանակին կհայտնաբերվեն գոյություն ունեցող առողջական խնդիրները եւ կիրականացվեն համապատասխան կանխարգելիչ կամ բուժիչ միջոցառումներ:

Ակնկալվող արդյունքը

Օրենքի լրացումը միանշանակ կնպաստի Հայաստանում ծնելիության մակարդակի բարձրացմանը, ինչն էլ զգալի ազդեցություն կունենա դեմոգրաֆիական, բնակչության առողջության պահպանման խնդիրների լուծման